ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆՆ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Օգոստոսի 26-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառին բարի վերադարձ մաղթելու նպատակով Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանն ու վարչապետ Արմեն Դարբինյանը:

Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռ ժամանած Արամ Ա Կաթողիկոսին, ինչպես նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի առիթով Մայր Աթոռում հավաքված հոգևոր հայրերին:

Անդրադառնալով Միացյալ Նահանգներ կատարած այցելությանը, Վեհափառ Հայրապետը խոսեց այն ներուժի մասին, որ առկա է սփյուռքահայ շրջանակներում, և կարևորեց այդ ներուժի կենտրոնացումը և հայության համախմբումը անկախ Հայաստանի շուրջ: Միաժամանակ Վեհափառ Հայրապետը ընդգծեց Հայ Առաքելական Եկեղեցու կարևոր դերը, իբրև այդ գաղափարի հիմնական կրողի ու արմատավորողի:

«Մեր Աթոռը ազգային ուղեկիցն է, և որքան ժողովուրդը տեսնե մեր միասնականությունը, մենք այնքան կհզորանանք», - ավելացրեց Արամ Ա Կաթողիկոսը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկացրեց նաև այս օրերին գումարված Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի մասին, որտեղ քննարկված թեմաներից մեկը Եկեղեցի-պետություն հարաբերություններն էին:

Վեհափառ Հայրապետը նկատեց, որ նորանկախ Հայաստանում Հայ Առաքելական Եկեղեցին, իբրև Ազգային Եկեղեցի, իր կենսական դերը պետք է ուժեղացնի: Այդ առիթով Վեհափառ Հայրապետը կարևորեց վերոհիշյալ խնդրին վերաբերող առանձին մի հանձնախմբի ստեղծման անհրաժեշտությունը:

Իր հերթին պարոն Քոչարյանը կարևորեց Եկեղեցի-պետություն միասնությունն ու Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր առաքելությունը Հայաստանի ամրացման գործում:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը առանձնազրույց ունեցան նախագահի և վարչապետի հետ՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ու 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման հիմնական հարցերի շուրջ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ